«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

27 Դեկտեմբերի 2022, N 4 - 6

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՆԻՍՏՈՒՄ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3) ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում (արձանագրություն N 3) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսագետ» հրատարակչությունում հրատարակությունների իրականացման աշխատակարգի» 9-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«9. Հրատարակչության տարեկան թեմատիկ պլանների շրջանակներում հրատարակությունների լույս ընծայումից հետո 18 օրինակ տրվում է հրատարակչությանը նպատակային բաշխման համար (2 օրինակ՝ Հայաստանի ազգային գրադարանին, 2 օրինակ՝ Հայաստանի ազգային գրապալատին, 2 օրինակ՝ ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանին, 5 օրինակ՝ Արցախի պետական համալսարանին, 3 օրինակ՝ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղին, 2 օրինակ՝ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղին, 2 օրինակ՝ ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչությանը), 20 օրինակ՝ հեղինակին և համահեղինակներին, իսկ մնացածը՝ ՀՊՏՀ գրադարանին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2022 թ. դեկտեմբերի 27
Երևան